ISSN 1829-0361

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(13)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(13)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(13)

YEREVAN 2024 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(13)

ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Նելլի Կարապետյան – *պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Եսայան

Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում 8

Իրինա Բաղալյան

Այլախոհական և իրավապաշտպան շարժումները
խորհրդային հայաստանում 1960–1980-ական թվականներին 19

Սամվել Պողոսյան

Տիրան արք. Ներսոյանի արխիվը Երուսաղեմի
Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում (տեղեկագիր) 37

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Եվաղյան

Նախնական դիտարկումներ Միտրիդատ I թագավորի դրամի մասին,
չհրապարակված կորպուս և մտորումներ նրա թագավորական
գաղափարախոսության մասին 52

ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

Հայկական գաղթավայրերից մի քանիսի ոսկերիչները 70

Հրազդան Թոքմաջյան

Պաշտամունքային կառույցները ասեղնագործություններում 92

Արփակ Ասատրյան

Խորանազարդ սինիներ (ըստ ՀԱԹ, ՀՊԹ, ԵՔՊԹ, ԿԵԹ և ԴԵԹ նյութերի) 99

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Լիաննա Գևորգյան

Ձանգվածային մշակութային միջոցառումները որպես
ժամանակակից թանգարանի գործունեության ակտիվացման միջոց 122

Մեդա Գալստյան

Հավերժի ճամփորդներ. Անկատար երազանքներ ցուցադրությունը 136

Տաթևիկ Մարոյան

Սուրճի առօրեականության պատմության թանգարանային
ներկայացումը և շարունակական կրթության բաղադրիչը 149

Մանե Խառատյան

Ճապոնական ոսկիյո-է գրաֆիկական աշխատանքների
ՀՊԹ-ում պահվող հավաքածուն 164

Ասպղիկ Սիմոնյան

Հնագիտական առարկաների վերականգնում. խեցեղենի
վերականգնման առանձնահատկությունները 192

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 199

DOI:10.56653/18290361-2024.13-19

Իրինա Բադալյան

Հայաստանի պետական թանգարան
irina.badalyan19@gmail.com

ԱՅԼԱԽՈՀԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960–1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ*

Հիմնաբառեր. Այլախոհական շարժում, այլախոհ, Խորհրդային Հայաստան, բռնաճնշումներ, դատավճիռ, ԱՄԿ, Հելսինկյան խումբ

Ներածություն

Այլախոհական շարժումը խորհրդային ժամանակաշրջանի քաղաքական պատմության ամենաքիչ ուսումնասիրված երևույթներից է: Այլախոհության գիտական ըմբռնման սկիզբը դրել են հենց այս շարժման մասնակիցները, ովքեր հրապարակել են 1970–1980-ական թթ. Արևմուտքում մի շարք վերլուծական ընդհանրացնող աշխատություններ: Այս շարժումն իր վերելքներով ու վայրէջքներով որոշակի դերակատարություն է ունեցել Խորհրդային Միության քաղաքական զարգացումներում և շարժման առանձին ներկայացուցիչներ դարձել են ԽՍՀՄ-ի գոյության վերջին շրջանի ու անկախ հանրապետությունների ձևավորման ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների ակտիվ մասնակիցներ:

Մեր նպատակն է հետազոտել և ներկայացնել այլախոհների ծագումը, պայքարի միջոցները, նրանց նկատմամբ վերևից պարտադրվող բռնաճնշումները և լուսաբանել այլախոհական շարժման դերը Խորհրդային Հայաստանում:

Հետազոտությունը կատարվել է պատմական, պատմահետազոտական մեթոդների միջոցով:

ԽՍՀՄ-ում և Սոցիալիստական ճամբարի երկրներում այլախոհության պատմությունն ընդունված է սկսել 1960-ականների սկզբից, սակայն դա չի նշանակում, թե մինչ այդ ԽՍՀՄ-ում այլախոհներ չեն եղել, քանի որ բռնատիրական ուղիով ընթացող ցանկացած երկրում այլախոհությունն ինքնաբերաբար ծնվում ու այդ բռնատիրության ողջ ընթացքում ուղեկցում է նրանց:

«Այլախոհ» տերմինը սկսեց կիրառվել ԽՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի ընդդիմադիր շարժման ներկայացուցիչների նկատմամբ, ովքեր հակադրվում էին խորհրդային համակարգին և մարքսիստ-լենինյան գաղափարախոսությանը ոչ բռնի միջոցներով: Այդ ժամանակից ի վեր ավտորիտար և տոտալիտար ռեժիմնե-

* Ստացվել է 31.03.2024, ուղարկվել է գրախոսման 12.04.2024, ընդունվել է տպագրության 01.07.2024:

րին ընդդիմացող մարդիկ կոչվում են այլախոհներ, չնայած «այլախոհ» տերմինն օգտագործվում է այլ իրավիճակներում ևս: Տերմինը սկզբում սկսեց գործածվել Արևմուտքում, իսկ հետո հենց այլախոհների կողմից: Այդ տարիների պաշտոնական մամուլում այլախոհները եղել են «ուրացողներ», «զրպարտիչներ», «մակաբույծներ», «դավաճաններ» և այլն: Հասարակության մեջ նրանք գործնականում մեկուսացված էին: Բազմաթիվ օտարերկրյա քաղաքագետներ և հասարակական գործիչներ ի սկզբանե բացասաբար են գնահատել այլախոհությունը միակողմանիության համար, ինչը, նրանց կարծիքով, արտահայտվել է իրավունք չունեցող ռեժիմում մարդու իրավունքների համար պայքարելու ուտոպիստական փորձ:

1960-ականներին մտավորականության մի քանի ներկայացուցիչներ ձերբակալվեցին իրենց «հակասովետական գործունեության համար»: Հարկ է նշել գրողներ Յուլի Դանիելի և Անդրեյ Սինյավսկու ձերբակալությունը: Վերջինս ավարտվեց Մոսկվայի Պուշկինի հրապարակում մարդու իրավունքների խախտումների դեմ բողոքի ցույցով, որն էլ իր տեսակի մեջ առաջինն էր Խորհրդային Միությունում (Dissident Movement in the Soviet Union): Նրանք հայտնի էին Աբրահամ Տերց և Նիկոլայ Արժակ կեղծանուններով և իրենց ստեղծագործությունները մաքսանենգ ճանապարհով տեղափոխում էին Արևմուտք՝ հիմնականում Ֆրանսիա, Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատանն աշխատող կնոջ՝ Ֆրանսիայի ռազմածովային կցորդի դուստր Հելեն Պելտիե-Զամոյսկայի միջոցով: Մարդու իրավունքների համար շարժումը, որն ամրագրված էր Խորհրդային Սահմանադրությամբ և ԽՍՀՄ ղեկավարության կողմից ստորագրված միջազգային փաստաթղթերով, կարծես հեռանկար էր բացում: Այս էր պատճառը, որ այս գործընթացը դարձավ իրավապաշտպան շարժման ծնունդը (Смагина 1998, 260):

Շարժումն իր կազմով տարասեռ էր: Այնտեղ կարելի էր հանդիպել «իսկական կոմունիստների», ովքեր կարծում էին, որ մարքսիստ-լենինյան ուսմունքը խեղաթյուրված է, «արևմտյան լիբերալների», որոնք պաշտպանում էին արևմտյան կամ ամերիկյան արժեքները, խմբերի, որոնք հակասում էին պաշտոնական գաղափարախոսությանը, ազգայնականների, ովքեր հանդես էին գալիս ուղղափառության կամ միապետության վերածննդի օգտին և հանրապետական ազգայնականների (Բալթյան երկրներ, Ուկրաինա, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան), ովքեր հանդես էին գալիս ազգային ինքնորոշման օգտին (Ефремова 2014, 466):

Այսպիսով, այլախոհը այն մարդն է, ով պաշտպանում է ընդհանուր ընդունված տեսակետներից արմատապես տարբերվող տեսակետները: Հաճախ անձնական համոզմունքների այս բախումը գերիշխող իշխանության հետ հանգեցնում է հալածանքների, բռնաճնշումների, աքսորի պաշտոնական իշխանությունների կողմից (Значение слова диссидент): Նրանք տարբեր ձևերով հանդես են եկել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանմամբ, ընդդեմ այլախոհների հետապնդումների, բողոքել են խորհրդային զորքերի Չեխոսլովակիա (1968թ.) և Աֆղանստան (1979թ.) մուտքի դեմ: Նրանք ենթարկվել են բռնաճնշումների իշխանությունների կողմից, շատերը դատապարտվել են լրտեսության, դավաճանության և այլ շինծու մեղադրանքներով, բռնի տեղավորվել հոգեբուժարաններում, արտաքսվել կամ հարկադրված արտագաղթել (Что такое Диссидент? Значение слова Диссидент в историческом словаре):

Շարժման անդամներն իրենք բացասաբար էին վերաբերվում «այլախոհ» արտասահմանյան եզրույթին, ուստի շարժումն սկզբում անվանեցին «ժողովրդավարական», հետո «ազատական», իսկ վերջում՝ «իրավապաշտպան»:

Այլախոհությունը տարբեր ձևեր ունեցավ՝ հանրային բողոքներ և ցույցեր, բաց նամակներ խորհրդային առաջնորդներին և արգելված գրական երկերի ձեռագրերի պատճենների (սամիզդատների) տարածում, հասարակական և քաղաքական մեկնաբանություններ: Բացի այդ, 1968 թվականից մինչև 1980-ականների սկիզբը «Սամիզդատ» ամսագիրը՝ «Ընթացիկ իրադարձությունների տարեգրությունը», ծառայել է որպես Խորհրդային Միությունում մարդու իրավունքների խախտումների մասին տեղեկատվության մաքրման կենտրոն (James von Geldern, The Dissident Movement):

Այլախոհական շարժումը Խորհրդային Հայաստանում

Այլախոհական շարժումը դարձավ ԽՍՀՄ պատմության անբաժանելի ուղեկիցը, որը յուրովի դրսևորվեց նաև Խորհրդային Հայաստանում: Այդ առումով ԽՍՀՄ-ում Հայաստանը 1960–1980 թթ. առանձնահատուկ տեղ է գրավել: Այստեղ, ի տարբերություն այլ հանրապետությունների, ոչ թե տարերային կամ դիպվածային, այլ կազմակերպված այլախոհական շարժում էր գործում:

Խորհրդայնացումից հետո հայ ժողովրդի մեջ ազգային զգացողությունների բուռն աշխուժացում արձանագրվեց Հայրենական պատերազմի ավարտից հետո՝ Պոտսդամի կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման ժամանակաշրջանում, երբ դրվեց Թուրքիայի կողմից 1921 թ. բռնազավթված հայկական տարածքները հայ ժողովրդին վերադարձնելու հարցը (Կարապետյան 2007, 373):

Որոշակի վերապահումներով Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժումը բաժանվում է հետևյալ փուլերի՝

- 1953–1962 թթ.՝ նախապատմություն
- 1962–1966 թթ.՝ կազմակերպչորեն ձևավորում կամ ծննդի շրջան
- 1966–1980 թթ.՝ ակտիվ գործունեության շրջան
- 1980–1985 թթ.՝ անկման շրջան (Մանուկյան 2017, 176):

Ի. Ստալինի մահը 1953 թվականին համարվում է ԽՍՀՄ պատմության ջրբաժան: Ձանգվածային բռնաճնշումները դադարեցվեցին: Երկրում տեղի ունեցած փոփոխությունները ազդեցին պետության և հասարակության կյանքի բոլոր ոլորտների վրա: Այս ամենը կարևոր դեր խաղաց ազգային շարժման ձևավորման գործում և հետագայում հանգեցրեց «անկախ Հայաստանի» գաղափարի առաջացմանը հասարակության որոշակի հատվածի մոտ (Манукян 2006, 83): Դեռ 1946–1948 թթ. կազմակերպված զանգվածային ներգաղթը Հայաստան, ազգային զգացողությունների բուռն վերելքի ժամանակաշրջան էր, որի ընթացքում շուրջ 89 հազար արտասահմանում ապրող հայեր եկան Հայաստան: «Կորսված հայրենիքի» գաղափարը նրանց ներհոսքի շնորհիվ կրկին տարածում և ուժ ստացավ հասարակության մեջ: Դեռ հետպատերազմյան տարիներին, բնականաբար ոչ առանց կենտրոնի իմացության, բարձրացվեցին Արևմտյան Հայաստանի վերամիավորման, ապա Արցախի վերամիավորման հարցերը (Մանուկյան 2017, 30–33):

Պատմական հայրենիքի կորստյան, անկախ պետականության վերականգնման, Հայոց Ցեղասպանության հատուցման և Արցախի ու Նախիջևանի հիմնախնդիրների արդարացի հանգուցալուծման գաղափարները Խորհրդային Հայաստանում այլախոհական կազմակերպությունների ձևավորման հիմք հանդիսացան, որոնց նպատակը ազատ, անկախ և միացյալ հայրենիքի տեսլականն էր (Սարգսյան 2015, 170)։ Հայաստանում ստեղծվեցին խմբեր, որոնք գործում էին ազգային արժեքների քարոզչության շրջանակներում և հիմնական նպատակը համարում էին ազգային խնդիրների լուծումը։ Ուստի այս երևույթը բնութագրելու համար Սուրեն Մանուկյանն առաջարկում է օգտագործել «ընդհատակյա շարժում» տերմինը, իսկ որպես հոմանիշ՝ «ազգային շարժում» և «հայրենասիրական շարժում» հասկացությունները (Манукян 2006, 84)։

1950-ական թթ. Խորհրդային Հայաստանում ընթացող քաղաքական գործընթացների արդյունքում սկսեց ձևավորվել այլախոհական շարժումը, որն առավել ցայտուն դրսևորումներ ունեցավ արդեն 1960-ական թթ.։

Մասնավորապես 1952 թվականին Թուրքիան հիմնովին փոխում է Խորհրդային Միության հետ հարաբերությունների տրամաբանությունը՝ միանալով Հյուսիսատլանտյան դաշինքին, որն ուղիղ հակադրության և հակամարտության մեջ էր գտնվում ԽՍՀՄ-ի և համընդհանուր Վարշավյան պայմանագրի դաշինքի պետությունների հետ։ Թուրքիայի միացումը ՆԱՏՕ-ին, ըստ էության, Թուրքիայի հակադրումն էր ռուս-թուրքական փոխհամաձայնեցված շահերին և տարածաշրջանային հարցերի երկկողմանի փոխըմբռնմամբ լուծման պայմաններին, որոնք ամրագրված էին և գործում էին 1921 թ. մարտի 16-ին կնքված Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով (Հարությունյան 2023, 45)։ Փաստորեն ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների փոփոխությունը պատճառ հանդիսացավ ինչպես հայ հայրենասերների ակտիվացման, այնպես էլ խորհրդային իշխանությունների կողմից հակաթուրքականության հրահրման գործում։

Մյուս կողմից Խորհրդային Հայաստանում այլախոհության նախադրյալների ուսումնասիրության իմաստաբանության մեջ կարևոր է ընդգծել Մոսկվայի պայմանագրի 3-րդ, 8-րդ և 15-րդ հոդվածները, որոնք կարևորագույն դեր են ունեցել հայ այլախոհական մտքի և գաղափարական հասունացման ընթացքում (Հարությունյան 2023, 45)։ Այս պայմանագրի երրորդ հոդվածով Նախիջևանի մարզը, ներառյալ նաև հայկական Գողթան և Շարուր գավառները, դառնում էր ինքնավար տարածք՝ Խորհրդային Ադրբեջանի խնամակալության ներքո։ Որպեսզի այն երբևէ Հայաստանին չանցնի, պայմանագրում կետ մտցվեց, որ Ադրբեջանն այն չի զիջի որևէ երրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին (Բաղալյան և այլք 2012, 622)։

Ըստ պայմանագրի 8-րդ հոդվածի՝ պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տարածքում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրենց տարածքում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ։ Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի

Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ (Կիրակոսյան, Սահակյան 1972, 501)։ Այս դրույթն ինքնին պատճառ հանդիսացավ այլախոհական շարժման ակտիվացման, քանի որ սրա հիման վրա էր, որ հետագայում Խորհրդային Միությունում խստորեն արգելվեց հողային խնդիրների մասին բարձրաձայնումը։

Խորհրդային Հայաստանում այլախոհական գաղափարների ամբողջական և համընդգրկուն ձևավորման մեջ առանձնահատուկ նշանակություն ունի նաև Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը, որով Ռուսաստանը պարտավորվում էր անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչվեն Մոսկվայի պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց։ Այս դրույթով Ռուսաստանն իր վրա վերցնում է պարտավորություն՝ ի թիվս անդրկովկասյան այլ հանրապետությունների՝ խորհրդայնացված Հայաստանին պարտադրել, որ հայերը հաշտության պայմանագիր կնքեն Թուրքիայի հետ՝ օրինականացնելով սեփական տարածքների բռնազավթումն ու օտարումը (Հարությունյան 2023, 49)։

1965 թվականի մարտի 16-ին՝ Մոսկվայի 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի ստորագրման օրը, Խորհրդային Հայաստանի նախարարների խորհուրդը որոշում է ընդունում՝ «1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար կոթող կառուցելու» մասին (ՀԱԱ ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2)։ Հասարակության մեջ ազգային գաղափարների առկայության ցայտուն վկայությունն էր 1965 թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած զանգվածային ցույցերն ու հանրահավաքները՝ կապված Եղեռնի 50-ամյակի հետ։ Այդ առումով հիշատակության է արժանի Գրողների միության կազմակերպության ժողովի արձանագրությունը 1965 թ. ապրիլի 27-ին. «Հիսուն տարի առաջ տեղի է ունեցել մի ահավոր կոտորած, որը մեր ժողովրդին զրկում էր հողից, կյանքից, ունեցվածքից։ Անցել է հիսուն տարի, և ահա մեր ժողովուրդը ապրում է վերելք և վերածնություն։ Եվ այս վերածնված ժողովուրդն է, որ նշում է Եղեռնի հիսնամյակը, Եղեռնը սուգ է, բայց վերածնված ժողովրդի սուգն է, ուստի պատշաճ ձևով պետք է կատարվեր դրա նշումը», — ասում է գրողների միության անդամ Ստեփան Թոփչյանը։ Անդրադառնալով ապրիլի 24-ի խուլիգանություններին՝ նշում է, թե ո՞ւմ վրա էին քարեր նետում այդ մարդիկ Կոմիտասի նկարը իրենց ձեռքում պահած (Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, «Գրողների միության կուսկազմակերպության ժողովի արձանագրություն» 2005, 76–78)։

Մեկնաբանելով տեղի ունեցած իրադարձությունները՝ Սիլվա Կապուտիկյանը նշում է, որ դրանք պատմական ու քաղաքական պահի թելադրանք էին։ Աշխարհասփյուռ հայությունը նայում է Խորհրդային Հայաստանի վրա, որպես իր հայրենիքի, իր հույսի ու ապավենի վրա։ Ինչ պատկեր կստացվեր, եթե այդ հայրենիքը չհարգեր իր միլիոն ու կես զոհերի հիշատակը, որ տեր չկանգներ փրկված մյուս կեսի՝ սփյուռքահայության բաղձանքներին, իր զայրույթի ձայնը բարձրացներ ցեղասպանության դահիճների դեմ։ Աշխարհասփյուռ հայությունը նայում է Խորհրդային Հայաստանի վրա, որպես իր հայրենիքի, իր հույսի ու ապավենի վրա։ Ամեն տարե-

բային շարժում իր հետ բերում է տիղմ և քարեր, և դրանք էին, որ իրականացրին հակահասարակական գործողություններ: Այնուհետև Սիլվա Կապուտիկյանը իր ելույթում խնդրում է, որպեսզի հայ մտավորականության ներկայացուցիչներին հնարավորություն տրվի հանդիպելու միութենական ղեկավարներին: Ապա ելույթ ունեցան Համո Սահյանը, Սողոմոն Տարոնցին, Սևակ Արզումանյանը և ուրիշներ, ովքեր դատապարտեցին կատարված խուլիգանությունը, բայց դա չի վերաբերում այն մասնակիցներին, որոնք առավոտից երեկո քայլել են փողոցներով: Հայաստանի Խորհրդային Գրողների միության սկզբնական կազմակերպության դռնբաց ժողովը, լսելով թուրքական բարբարոսների ձեռքով կատարված Եղեռնի 50-ամյակին նվիրված սգո հանդեսի մասին հաղորդումը, ամենից առաջ նշում է, որ ԽՄԿԿ-ի Նախագահության հավանությանը արժանացած ՀԿԿ Կենտկոմի որոշումը՝ պատմության մեջ նախընթացը չունեցող հայ եղեռնական կոտորածների 50-ամյա տարելիցը նշելու մասին, միանգամայն տեղին էր և համարում է ճիշտ (Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, «Գրողների միության կուսկազմակերպության ժողովի արձանագրություն» 2005, 80–82, 106–109):

Իսկ ՀԿԿ Կենտկոմի 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին արձանագրության մեջ նշվում է, որ ՀԽՍՀ Հասարակական կարգի պահպանության նախարարությունը Օպերայի և բալետի թատրոնի շենքի անհրաժեշտ պահպանություն չի ապահովել, ՀԽՍՀ Խորհրդին կից ՊԱԿ-ը ժամանակին անկարգությունների հրահրիչների բացահայտման ուղղությամբ օպերատիվ աշխատանքներ չի իրականացրել: ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը անթույլատրելի է համարում Երևանում երթերին մասնակցություն ընդունած անդամների պահվածքը և այդ օրվա հետ կապված ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը թույլ է տվել մի շարք բացթողումներ, ուստի որոշում է ընդունում քննարկել Երևանում տեղի ունեցած անկարգությունները, լուծել երիտասարդության կոմունիստական դաստիարակության մեջ թերացումները, այդ օրվա դեպքերից կատարել հետևություններ, պարտավորեցնել թերթերի ու հանդեսների խմբագրություններին ավելի շատ ուշադրություն դարձնել ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության հարցերին (Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, «ՀԿԿ Կենտկոմի որոշումը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին 2005, 110–116):

Ցեղասպանության 50-ամյակի շրջանակներում սկսվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցումը, որի նախաձեռնողը հանրապետության այն ժամանակվա ղեկավարն էր՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յակով Զարոբյանը: Աշխատելով Հայաստանում, սերտորեն շփվելով մտավորականության ներկայացուցիչների հետ՝ Յակով Զարոբյանը հրաշալի գիտակցում էր Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված հիշատակի միջոցառումների անցկացման կարևորությունը:

Հուշահամալիրի շինարարությունն ավարտվում է ռեկորդային կարճ ժամանակահատվածում՝ երկուսուկես տարում: Հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1967 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 47-ամյակին (նկ. 1, նկ. 2):

Այլախոհական կառույցները և Հելսինկյան խումբը Խորհրդային Հայաստանում

1966 թ. ապրիլի 24-ին Եղեռնի զոհերի հիշատակը հարգելու արարողության ժամանակ, որ տեղի էր ունենում Կոմիտասի անվան այգում՝ Կոմիտասի շիրիմի մոտ, ձերբակալվեց Ստեփան Զատիկյանը՝ ի թիվս այդ օրը մի քանի տասնյակ ձերբակալվածների: Նա ենթարկվեց տասնօրյա կալանքի: Կալանավայրում ծանոթացավ Հայկազ Խաչատրյանի և Շահեն Հարությունյանի հետ: Ազատ արձակվելուց հետո միասին ստեղծեցին Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ): Այս խումբը փորձեց ոչ միայն գաղտնի կուսակցություն ստեղծել, այլև կազմեց տվյալ կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և երդման տեքստը (Ազգային միացյալ կուսակցության հիմնադիր անդամ Ստեփան Զատիկյան): ԱՄԿ-ն անկախ Հայաստանի ստեղծման համար պայքարող կուսակցություն էր: Մինչ այդ գործող կազմակերպություններն ու անհատները հիմնականում հանդես էին գալիս հայրենասիրության դիրքերից, առաջ քաշում Ղարաբաղի, Նախիջևանի, Ցեղասպանության խնդիրները, արծարծում Հայկական հարցը, և չէին կարծում կամ իրենց առջև խնդիր չէին դնում տեսնել Հայաստանը ԽՍՀՄ կազմից դուրս՝ որպես անկախ պետություն: Մինչև ԱՄԿ-ն չի եղել որևէ կազմակերպություն, կուսակցություն, որն առաջնային նպատակը համարի անկախ Հայաստանի համար պայքարը (Հարությունյան 2014, 78):

Ազգային միացյալ կուսակցության ծրագրի որոշ հատվածներում նշվում է, որ «Ազգային Միացյալ Կուսակցությունը քաղաքական, դեմոկրատական, հասարակական կազմակերպություն է, որի անդամը պետք է լինի ամբողջ հայության գիտակից տարրը: Հայ ժողովրդի միասնականությունը, ազգային հոգեբանության և բնորոշ կողմերի անխախտ պահպանումը, փոխադարձ սիրո առկայությունը, ներկայումս հանդիսանում է ամբողջ աշխարհի Հայ տարրի հիմնական էությունը, որի շնորհիվ այդ տառապած հայրենիքից քշված ժողովուրդը կկարողանա հասնել իր բարի նպատակներին, իղձերի իրականացմանը, կկարողանա վերականգնել կորցրած պետականությունը, կվերադարձնի հափշտակված, սրբապղծված հայրենի հողը և ամենից կարևորն է, Հայը ապրելով իր սեփական տան մեջ, իր սուրբ հողի վրա, նորից կստեղծի այն աշխարհահռչակ դրախտը, որը հիշատակվում Սուրբ Գրքում, քանզի նա ունի այն բոլոր առավելությունները, որով օժտված է մարդը լայն իմաստով» (Մանուկյան 2017, 47):

ԱՄԿ ծրագրում նշվում է, որ

1) Ազգային Միացյալ Կուսակցությունն իր հասարակական, քաղաքական, գաղափարական գործունեության ընթացքում զավթողական ոչ մի նպատակ չպետք է ունենա: Կուսակցության ազգային-ազատագրական գաղափարներին խորթ են միլիտարիզմը, թթու ազգայնությունը, գերիշխանության ձգտումը, ռասսայական խտրականությունը և միջազգային օրենքների կոպիտ խախտումը:

5) Քանի դեռ գոյություն չունի ազատ և անկախ Հայաստան, նշանակում է բացակայում է ամենակարևոր բանը՝ լիարժեք ազգ կամ պետություն կոչվելու համար...

6) ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱԶԱՏԱԳՐԵԼ ԱԶԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: (ԱՄԿ կանոնադրության մեջ հեղինակները ամբողջությամբ մեծատառերով են գրել 6-րդ կետը, հավանաբար ընդգծելով այս կետի կարևորությունը)

7) Պայքարել միացյալ Հայկական հանրապետություն ստեղծելու համար, իսկ հետագայում նաև Կիլիկիայի Հայկական Հանրապետություն ստեղծելու համար...

10) Անողոք պայքար սկսել մոսկովյան գերիշխանության դեմ, կամայականությունների և բռնությունների դեմ, որից հեծում և տքնում է ամբողջ ազգը...

11) Պահանջել Ռուսաստանից, որ խաղաղ ճանապարհով վերադարձնի Հայաստանին այն հողային տարածությունները, որ անօրինական կարգով տվել են Ադրբեջանին և Վրաստանին...

Կազմակերպության առաջին անդամները կուսակցության գաղափարներին հավատարիմ մնալու մասին Ազգային Սուրբ երդում էին տալիս Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում՝ Ծիծեռնակաբերդում: ԱՄԿ-ի յուրաքանչյուր անդամ պարտավոր էր սրբորեն հետևել կուսակցության ծրագրին՝ «հանուն Ազգի և Հայրենիքի» (Մանուկյան 2017, 47):

Սակայն չենք կարող չանդրադառնալ կուսակցության ծրագրի 6-րդ կետում հիշատակվող «չեզոք» արտահայտությանը: Իրենք՝ կուսակցության անդամները, հստակ չեն տալիս բացատրություն այն մասին, թե ինչ է նշանակել «չեզոք հանրապետություն». լինել քաղաքականապե՞ս չեզոք, խուսափել արտաքի՞ն շփումներից, եթե այո, ապա ինչպե՞ս: Այսինքն կարող ենք նկատել, որ առկա է որոշակի անորոշություն կուսակցության ծրագրում:

Կալանավորում և երկարատև պատժաչափերի էին ենթարկում ԱՄԿ-ականներին, սակայն դրան զուգահեռ Հայաստանում նորանոր մարդիկ էին անդամագրվում: Փաստորեն, ստեղծվել էր ընդհատակյա կենսունակ այնպիսի կառույց, որի դեմ անզոր գտնվեց խորհրդային անվտանգության համակարգը:

ԱՄԿ-ն ուներ նաև սեփական պաշտոնաթերթը: 1967 թ. ապրիլին, Ցեղասպանության օրվա կապակցությամբ, Ազգային Միացյալ կուսակցությունը (ԱՄԿ) տարածում է «Փարոս» վերնագրով առաջին թռուցիկը, իսկ նույն տարվա հոկտեմբերի 19–20-ը տարածում է նաև չորս էջից բաղկացած «Փարոս» թերթը՝ հետևյալ ութ հոդվածներով. «Ելնում են նորերը», «Հայ ժողովրդին», «Հայաստանը լծի տակ», «Հայկական հարցը», «Միջազգային դրությունը այսօր», «Փաստերն անողոք են», «Ինչ է ազգի լեզուն», «Երկու խոսք»: Սա թերթ էր և այդ թերթում խոսվում էր այն մասին, որ Հայաստանը պետք է դուրս գա ԽՍՀՄ կազմից և անկախ պետություն դառնա, ասվում էր, որ Հայաստանը բռնակցվել է Ռուսաստանին և ըստ էության՝ գաղութ է, քննադատվում էր մարքս-լենինյան ուսմունքը, հեղինակները հանդես էին գալիս հակախորհրդային ու հակակոմունիստական դիրքերից: Սա խորհրդային պետությանն ուղղված մարտահրավեր էր («Փարոս» այլախոհական առաջին թերթը Խորհրդային Հայաստանում): 1968թ. հուլիսի 11-ին՝ ԱՄԿ-ի հիմնադիրների ձերբակալությունից հետո՝ դատավճռում որպես պատ-

ճառներ նշվում են կուսակցության հիմնադրումը, զրպարտչական գաղափարների տարածումը, թերթի հիմնումը, թռուցիկներ տարածելը, անկախ Հայաստանի համար պայքարը և այլն: 1969 թ. հունվարին կայացավ ամբաստանյալների դատավճիռը, որով նրանք դատապարտվեցին տարբեր ժամկետներով պատժի (Հարությունյան 2014, 121–124): Պետանվտանգության կոմիտեն հավանաբար վստահ է եղել, որ հակախորհրդային կազմակերպությունն այլևս ոչնչացված է: Կուսակցության փաստացի ղեկավար դարձավ Պարույր Հայրիկյանը, ով կազմակերպել էր «Հայ երիտասարդական միություն» խմբակը, որը զբաղվում էր ֆոտոեղանակով բազմացված թռուցիկների ստեղծմամբ: Այնուհետև դառնում է ԱՄԿ-ի երիտասարդական կառույցի՝ «Շանթ»-ի ղեկավարը: Կազմակերպում է «Ցասում», «Երկունք» թռուցիկները: ԱՄԿ գործով երկրորդ դատավարությունը տեղի ունեցավ 1970 թ. փետրվարին: Դատապարտվում էին Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Հակոբ Արշակյանը, Աշոտ Խաչատրյանը և Ռաֆայել Բարսեղովը: Բոլորն էլ մեղադրվում էին ՀԽՍՀ 65 հոդվածի 1-ին մասով և 67 հոդվածով: Պ. Հայրիկյանը դատապարտվում է 7 տարի ազատազրկման և 3 տարի աքսորի: 1987 թ. ԱՄԿ հիմքի վրա ստեղծվում է Ազգային ինքնորոշման միավորումը (Հարությունյան 2014, 149): Իսկ հետագայում նախկին ԱՄԿ-ականների կողմից ստեղծվեցին Հայաստանի հանրապետական կուսակցությունը՝ Աշոտ Նավասարդյանի կողմից, Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությունը՝ Ազատ Արշակյանի կողմից և Ազգային միացյալ կուսակցությունը՝ Պարույր Հայրիկյանի կողմից (Հարությունյան, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում): Ազատազրկման առաջին տարիներն ընթանում էին Մորդովիայի քաղաքական ճամբարում: Այնտեղ Զատիկյանը շարունակում էր ակտիվ քաղաքական գործունեությունը: 1970 թ. հուլիսի սկզբին նա 20 երիտասարդ քաղբանտարկյալների հետ մասնակցեց խստացված ռեժիմի դեմ բողոքի 6-օրյա հացադուլին: Այդ ակցիայի համար Զատիկյանը, Վ. Կուլինինը, Ն. Դրագոշը և Ն. Տարնովսկին ուղարկվում են Վլադիմիրի բանտ: Այդ առիթով բողոքի հացադուլ է հայտարարվում երկու կալանավայրերում, որտեղ ընթերցվում է նրանց՝ Վլադիմիր տեղափոխելու մասին հրամանը: 1971 թ. նոյեմբերին այլ քաղբանտարկյալների հետ Զատիկյանը մասնակցում է հացադուլի Վլադիմիրի բանտում: Նրանք բողոքում են քաղբանտարկյալների մասին տեղեկություններ տրամադրողներին հավաքագրելու ՊԱԿ-ի պրակտիկայի, ինչպես նաև բանտարկյալների հայտարարությունները պետական մարմիններում որպես հակախորհրդային փաստաթղթեր ներկայացնելու, դրանք քրեականացնելու և շանտաժի դեմ: 1972 թ. հուլիսին Զատիկյանը դուրս է գալիս Վլադիմիրի բանտից և վերադառնում Երևան: Ազատ արձակումից հետո գտնվում է ոստիկանության վերահսկողության տակ: Սակայն Զատիկյանին հաջողվում է կապ հաստատել ԱՄԿ-ի իր համախոհների, նախ և առաջ Հայրիկյանի, Նավասարդյանի և Արշակյանի հետ, ովքեր այդ ժամանակ գլխավոր դեր էին կատարում կազմակերպությունում (Հարությունյան 2014, 308):

ԱՄԿ ձևավորումից կարճ ժամանակ անց՝ 1967–68 թթ. ասպարեզ է գալիս մի նոր կազմակերպություն՝ «Հայ հայրենասերների միությունը»: Միությունն ուներ իր կանոնադրությունը, որը քննարկվել և ընդունվել էր կազմակերպության ան-

դամների ժողովում: Նոր անդամները պետք է ընդունեին այդ կանոնադրության դրույթները, ենթարկվեին դրա պահանջներին և անդամավճար մուծեին: Այս միությունը մասնաճյուղեր ուներ Արարատում, Գյումրիում, Արտաշատում, Երևանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում: Կազմակերպության ղեկավարն էր Հակոբջան Թադևոսյանը: Այս կազմակերպությունը նույնպես ժամանակի ոգուն համահունչ, առաջնային էր համարում Եղեռնի, կորուսյալ հայկական տարածքների, Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրները: Նրանք համարում են, որ ինչպես նշված է դատավճռում՝ Խորհրդային Միությունը «որոշ հարցերում արհամարհում և ոտնահարում է հայ ժողովրդի կենսական շահերը»: Միաժամանակ խորհրդային կարգերի դեմ ոչինչ չունեին: Այս առումով հատկանշական է այն փաստը, որ կազմակերպության անդամները՝ ծանոթանալով ԱՄԿ-ի արդեն հրատարակած «Փարոս» թերթին, խստորեն մերժել էին թերթում առաջ քաշված գաղափարները՝ հակասովետիզմի և անկախության անհրաժեշտության կապակցությամբ: Նրանց համար հատկապես անընդունելի է եղել անկախության գաղափարը: Միևնույն ժամանակ 1967–1968 թթ. ապիլի 24-ի թռուցիկներում մեղադրում էին ԽՍՀՄ կառավարությանը, որը ոտնահարում է հայ ժողովրդի իրավունքները՝ հօգուտ Թուրքիայի, ԽՍՀՄ-ում տարվում է հայերի ձուլման և ռուսացման քաղաքականություն, և կոչ էր արվում բարձրաձայնել Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի ինքնավար հանրապետությունը Հայաստանին միացնելու հարցը: Խմբի անդամները 1968 թ. ձերբակալվում են և դատապարտվում 2061 հոդվածով (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը): Հակոբջան Թադևոսյանը պատիժը կրել է Հայաստանում, ընդհանուր ռեժիմի գաղութում: Ազատվելուց հետո մշտական կապեր է հաստատել հայ այլ քաղբանտարկյալների և այլախոհների հետ: Անդամագրվել է ԱՄԿ-ին (Հարությունյան 2014, 63):

Արդեն 1970-ական թվականներից սկսեց Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժման վերելքը, որն անկում ապրեց 1980-ական թթ. առաջին կեսին: Այս տարիներին, բացի ազգային բնույթի այլախոհական դրսևորումներից, Հայաստանում ձևավորվում են նաև իրավապաշտպան կազմակերպություններ:

ԽՍՀՄ-ում քաղաքական այլակարծության ամենահայտնի դեմքերից մեկը Ա. Սախարովն էր՝ միջուկային ֆիզիկոս, ով սովորաբար համարվում է խորհրդային ջրածնային ռումբի հայրը: Վերջինս իր երկու գործընկերների հետ ստեղծում է Մարդու իրավունքների կոմիտե: Այն հիմնվեց որպես հեղինակների ասոցիացիա, որը, ըստ խորհրդային օրենքների, ձևականորեն չէր պահանջում իշխանությունների թույլտվությունն ու արտոնագրումը: Դա ԽՍՀՄ-ում ձևավորված առաջին անկախ հասարակական ասոցիացիան էր, որը մտնում էր Մարդու իրավունքների միջազգային լիգայի մեջ, որոշակի երաշխիքներ էր տալիս, որ նրա անդամները չեն ազատազրկվի, որքան էլ որ Խորհրդային Միությունը միշտ չէ, որ հետևում էր այդ սկզբունքներին (Intellectual dissent in the USSR 1973, 13):

Սակայն ամբողջատիրական ռեժիմը 1972–1973 թթ. ակտիվ հարձակում սկսեց այդ շարժման դեմ, հատկապես մամուլում՝ Ա. Սախարովի դեմ, շարժման անդամների մեծ մասը ձերբակալվեց: Արտասահմանում «Արխիպելագ գուլագի» տպա-

գրությունից հետո՝ 1973 թ. ձերբակալվեց նաև Ա. Սոլժենիցինը, ում 1974 թ. վտարեցին երկրից: 1973 թ. դատապարտվեցին Պյոտր Յակիրը և Վիկտոր Կրասինը, որը հայտնի էր որպես «24-ի գործ» (Մանուկյան 2017, 59):

Այլախոհական շարժման անկմանը հաջորդեց 1975 թվականին Հելսինկյան եզրափակիչ ակտի ստորագրումը: Հետաքրքիր է, որ համաժողովի կազմակերպման նախաձեռնությունը Խորհրդային Միությունից էր: Մոսկվայի նպատակն էր միջազգային ճանաչում ձեռք բերել Արևելյան Եվրոպայի վրա իր փաստացի վերահսկողության համար: Հելսինկյան բանակցությունների ընթացքում Բրեժնևի վարչակազմն ամենաշատը կենտրոնացել է Եվրոպայում սահմանների անձեռնմխելիության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների պաշտպանության վրա: Սա էր նաև պատճառը, որ արևմտյան երկրները, հատկապես ԱՄՆ-ը թերահավատորեն էին վերաբերվում Հելսինկյան համաձայնագրերին (Kaasik 2021): Մարդիկ, ըստ իրենց նախասիրությունների, կարող էին ստեղծել տարբեր կարգի կազմակերպություններ, խմբեր և պայքարել մարդու իրավունքների պաշտպանության համար: Նման խումբ 1976 թ. մայիսին Մոսկվայում ստեղծեց հայտնի ֆիզիկոս Յուրի Օրլովը, որը կոչվում էր «ԽՍՀՄ-ում Հելսինկյան համաձայնագրի կատարմանը նպաստող հասարակական խումբ»: Խմբում ընդգրկվեցին Ե. Բոնները, Պ. Գրիգորենկոն, Ա. Շչերանսկին և ուրիշներ: Նրանց նախաձեռնությունը ունեցավ այն նշանակությունը, որ «Հելսինկյան խմբեր» ձևավորվեցին Խորհրդային Միության մի շարք հանրապետություններում՝ Ուկրաինայում, Լիտվայում, Վրաստանում, Հայաստանում և այլուր, որոնք պայքարում էին մարդու իրավունքների պաշտպանության համար (Աբրահամյան 2019, 76–77):

Ինչպես արդեն նշել ենք, 1970-ական թթ. այլախոհական շարժումը վերելք է ապրում, ինչը նշանակում է, որ իշխանությունների կողմից կազմակերպվում են մեծամասշտաբ ձերբակալություններ:

1971 թ. դեկտեմբերին ՀԽՍՀ Գերագույն դատարանը դատապարտում է Վալտեր Մելիքյանին և մի շարք այլ մարդկանց՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Նախիջևանի ինքնավար շրջանների որոշ մասը Հայաստանին միացնելու և 1969 թ. սեպտեմբերին գաղտնի խմբակ հավաքագրելու համար, որն անվանել էին «Հայաստանի վերամիավորման միություն»՝ ՀՎՄ: Խումբը կազմում էր ծրագիր, կանոնադրություն և փորձում է գործունեության մեջ ներգրավել ԼՂ բնակիչներին: Սակայն ՀՎՄ-ն կազմակերպչորեն չձևակերպվեց, հավանաբար խմբի անդամների վաղ ձերբակալությունների պատճառով (Մանուկյան 2017, 60–61):

1973 թ. շարունակվում են դատավարությունները: Ինժեներ Բագրատ Շահվերդյանը դատապարտվեց 5 տարի ազատազրկման, 2 տարի աքսորի, վարորդ Արարատ Թովմասյանը՝ 3 տարի ազատազրկման, 6 ամիս աքսորի: Պատճառը հակախորհրդային ագիտացիա, պրոպագանդա, թռուցիկներ տարածելն էր, որտեղ փորձում էին արտահայտել այն միտքը, որ իբր ԽՍՀՄ-ում չկա ազգերի հավասարություն, որ խորհրդային հանրապետությունները անկախ չեն, այլ Ռուսաստանի գաղութներն են, որ բոլշևիկները հայկական հողերի մի մասը «ծախել» են թուրքերին: Նրանք, հիմնականում պոլիտեխնիկական ինստիտուտի

ուսանողներից գաղտնի խումբ էին ստեղծել «հայրենասեր» անվանումով: Սակայն մենք տեսնում ենք, որ, որպես կանոն, խմբերում ընդգրկված ոչ ակտիվ մասնակիցներին իշխանությունները չեն կանգնեցրել դատարանի առաջ: Սա, թերևս, 1960–1970-ական թթ. ԽՍՀՄ քաղաքական կյանքի որոշակի դրական առաջընթացներից մեկն է: Կարող ենք ենթադրել, որ գաղտնի խմբերի անդամների և նրանց հավաքույթների մասնակիցների անունները հայտնի էին համապատասխան մարմիններին, քանի որ նրանցից շատերը հանդես էին գալիս դատարաններում որպես վկաներ, իսկ քննության ժամանակ տրվում էին նաև դատական գործընթացին չմասնակցող այլ անձանց անուններ: Սա ցույց է տալիս, որ բռնապետական ռեժիմը, չփոխելով իր բնույթը, այնուամենայիվ, որոշակիորեն թուլացրել էր մոտեցումները այլախոհ տարրերի նկատմամբ (Մանուկյան 2017, 62–63):

Հակախորհրդային գործունեության համար դատավարությունների նոր ալիք է սկսվում 1974 թ.: 1974 թ. հուլիսին դատարանի առաջ էին կանգնել Նաիրիի շրջանի Արա գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Նորիկ Մարտիրոսյանը, Երևանի պետհամալսարանի 5-րդ կուրսի ուսանող Լևոն Բաղալյանը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսումնական մասի վարպետ Սամվել Մարտիրոսյանը, որոնցից առաջինը «որոշել է Սովետական ժողովուրդների մեջ ռասսայական և ազգային թշնամանք տարածելու համար գաղտնի խմբակ ստեղծել»: Հիմնական կոչը անկախ Հայաստանի ստեղծումն էր: 1973 թ. օգոստոսին Երևանի շենքերի պատերին գրառումներ են կատարել հետևյալ բովանդակությամբ. «Կորչե՛ն ռուսները, որոնք բռնանում են հայ ժողովրդի սրբազան իրավունքներին, կեցցե՛ ազատ Հայաստանը»: Նման բովանդակության 400 թռուցիկ են տարածել փոստարկղերի միջոցով, «Մոսկվա» կինոթատրոնում հանդիսատեսների մեջ ցրելով և այլն: Այս խումբը գործել է Աշոտ Նավասարդյանի փաստացի ղեկավարությամբ: Նորիկ Մարտիրոսյանը և ընկերները դատապարտվում են 3 տարվա ազատազրկման (Մանուկյան 2017, 64):

Այլախոհական շարժման գործելակերպի մեջ նորություն էր այն, որ Ռ. Զոհրաբյանն ու Ռ. Մարկոսյանը Երևանի Սարի-թաղի փողոցներից մեկի շենքում մեկուսացված, առանձին բնակարան են վարձել, որի բանալիները գտնվել են յուրաքանչյուրի մոտ և այդ սենյակը օգտագործել են գաղտնապահության նպատակների համար՝ մասնավորապես այնտեղ տպել են թռուցիկներ: Ուշագրավ է նաև այն, որ Ռ. Զոհրաբյանն ու Ռ. Մարկոսյանը 1974 թ. հունվարի 20-ին վառել են Երևանի կենտրոնական հրապարակի պատմության թանգարանի շենքի կամարին տեղադրված Վ. Լենինի մեծադիր նկարը: Դա բողոքի արտահայտման նոր ձև էր Հայաստանում, որը կատարվել էր ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար, ՍՄԿԿ քաղբյուրոյի անդամ Ա. Գրոմիկոյի Երևանում գտնվելու օրերին՝ ՀԽՍՀ-ն «Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշանով պարգևատրելու կապակցությամբ»: Նրանք դատապարտվեցին 2 տարվա ազատազրկման (Մանուկյան 2017, 67):

Ինչպես արդեն նկատեցինք, 1970-ական թթ. Հայաստանում ևս նկատվեց մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժում, որը որակապես նոր երևույթ էր հանրապետությունում:

Դրա ցայտուն օրինակն էր Ռոբերտ Նազարյանի գործունեությունը: 1976 թ. նա կապեր է հաստատում «առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների համար դատապարտված» Պարույր Հայրիկյանի, Ռազմիկ Զոհրաբյանի և այլոց հետ, հանդես գալիս նրանց պաշտպանությամբ: Նույն ժամանակ նա գրում է «Հանգանակություն ի նպաստ հայ քաղաքական բանտարկյալներին և նրանց ընտանիքներին» տեքստը, բազմացնում դատապարտյալների լուսանկարները: 1977 թ. գրում է «Բաց նամակ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Ջեյմս Քարտերին» տեսքստը, որտեղ դրսևորելով հակասովետական դիրքորոշում, հայտնում է, որ մենք զրկված ենք մենք հայրենիքից, պետականությունից: Նա հորդորում է նախագահին՝ օգնել «հայ քաղաքական բանտարկյալների» փրկության գործին: Բացի այդ նա Մոսկվայում մեծ կապեր ձեռք բերելուց հետո տարածում է մոտ 40 միավոր հակասովետական գրականություն: Ձեռագիր և մեքենագիր ձևով բազմացնում, պահում և տարածում է հայ ժողովրդին «Վրեժի», «Միության», «Ազատ, Անկախ Հայաստան ստեղծելուն» կոչ անող հակասովետական, ազգայնական «հերյուրանքներ» պարունակող երգեր, ինչպիսիք են «Ղարաբաղի ողբը», «Հայ ենք մենք» և այլն: Այսպիսով, նկատելի է, որ հայկական այլախոհական շարժումը ի դեմս Ռ. Նազարյանի գործունեության, նոր որակ է փորձում ձեռք բերել: Նախ, նա գրեթե բացահայտ է հանդես գալիս, ինչը հիշեցնում է ԽՍՀՄ ճանաչված այլախոհ Ալեքսանդր Գինզբուրգի վարքագիծը: Բացի այդ, նա բացահայտորեն հանդես էր գալիս քաղբանտարկյալների պաշտպանությամբ և գործում էր Մոսկվայի իր գործընկերների հետ: Թեև Նազարյանը իր գործունեությամբ դուրս եկավ Խորհրդային Հայաստանի սահմաններից, սակայն նրա մղիչ ուժը շարունակում էր մնալ ազգային գաղափարը և հայ քաղբանտարկյալների հարցը (Մանուկյան 2017, 70–74):

1970-ական թթ. վերջին Հայաստանում գործող այլախոհների մեջ առանձնանում են Ստեփան Զատիկյանը և նրա երկու ընկերները՝ կապված Մոսկվայի մետրոյում կազմակերպված ահաբեկչությամբ:

1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյում հնչում է պայթյուն, որի հետևանքով զոհվում են 7 և վիրավորվում 37 մարդ: Ինն ամիս անց՝ հոկտեմբերի 28-ին կասկածանքով Մոսկվա-Երևան գնացքում, Հայաստանի և Վրաստանի սահմանագծին ձերբակալվում են Հակոբ Ստեփանյանը և Զավեն Բաղդասարյանը, իսկ նոյեմբերի 2-ին՝ Երևանում Ստեփան Զատիկյանը: Հենց Զատիկյանին էլ խորհրդային իշխանությունները ներկայացրին որպես կազմակերպիչ: Նախաքննությունը շարունակվում է ավելի քան երկու տարի: Այդ ամբողջ ժամանակահատվածում մեղադրյալները գտնվում են Մոսկվայում: Դատավարությունը նկարահանվում էր տեսախցիկով: Դատավճիռը կայացվում է 1979 թ. հունվարի 24-ին: Երեքին էլ դատապարտում են մահապատժի: Դատավճռի մասին հարազատներն իմանում են միայն դատից հետո կայացած հանդիպման ընթացքում՝ հունվարի 27-ին: «Մեզ դատապարտեցին 10 րոպեում, դատարկ դահլիճում», — հարազատներին հայտնում է Ստեփանյանը: «Ամբողջ 15 ամսվա ընթացքում ես նրանց բառ անգամ չեմ ասել», — հարազատներին ասում է Զատիկյանը: Եղբոր հարցին՝ «Ասա՛, դու իսկապե՞ս մասնակցել ես այդ հանցագործությանը», Զատիկյանը պա-

տասխանում է. «Իմ միակ մեղքն այն է, որ ես այս աշխարհում երկու երեխա եմ թողել: Այլ մեղք ես չունեմ»: Նույն օրը Զատիկյանի մայրը դիմում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին գործը վերանայելու խնդրանքով: Սակայն 1979 թ. հունվարի 29-ին՝ մինչև բողոքարկման ժամկետի լրանալը, դատավճիռն ի կատար է ածվում: Հարազատներին այդպես էլ չեն հայտնում, թե որտեղ են թաղվել գնդակահարվածները (Հարությունյան 2014, 304):

Մահապատժից հետո ակադեմիկոս Սախարովը և Մոսկվայի Հելսինկյան խումբը բողոքներով են հանդես գալիս դատավարության հրապարակայնության սկզբունքների խախտման դեմ: Մետրոյի պայթյունից հետո Սախարովը հայտարարություն էր արել, որ հնարավոր է, դա ՊԱԿ-ի կողմից քաղաքական նպատակներով կազմակերպված սադրանք էր: Նրա նման կարծիքը հիմնված էր այն հանգամանքի վրա, որ պաշտոնատար անձինք դրա մասին հայտնել էին արևմտյան թղթակիցներին, թեև սովորաբար նման իրադարձությունները թաքցվում էին արևմտյան մամուլից, իսկ եթե դրանց մասին նույնիսկ հայտնում էին, ապա երկար «համաձայնեցումներից» հետո: Այս դեպքում տեղեկատվության օպերատիվ հաղորդումը հանգեցնում էր այն մտքին, որ «համաձայնեցումը» եղել է նախօրոք (The Helsinki Effect: International Norms, Human Rights, and the Demise of Communism):

ՊԱԿ-ի տեսանկյունից շատ ողջամիտ էր ընտրել հայ ազգային շարժումը, քանի որ Հայաստանը ԽՍՀՄ միակ պետությունն էր, որտեղ կար կուսակցություն, որն իր առջև նպատակ էր դրել դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Դա հեշտացնում էր հայ ազգային շարժման վարկաբեկումը ԽՍՀՄ ներսում և դրա սահմաններից դուրս՝ այն որպես ահաբեկչության մեթոդներից օգտվող ուժ ներկայացնելու եղանակով: ՊԱԿ-ի այդ ծրագիրը հաջողվում է: 1980–1982 թթ. ձերբակալվում և դատապարտվում են ԱՄԿ-ի այլ ակտիվիստներ, հասարակական կարծիքն ուղղվում է նրանց դեմ (Դիսիդենտական Հայաստան. Ստեփան Զատիկյան 2013):

1980–1984 թթ. համարվում են ԽՍՀՄ այլախոհական շարժման մայրամուտի ժամանակաշրջանը և Հայաստանում տեղի ունեցող գործընթացները ևս հաստատում են այդ իրողությունը: Այսպես, 1980 թ. կալանավորվում և Գորկի է աքսորվում Ա. Սախարովը, մայիսին ձերբակալվում է Ալեքսանդր Լավուտը՝ ԽՍՀՄ-ում Մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնող խմբի անդամներից վերջինը: 1980–1982 թթ. ձերբակալվում են իրավապաշտպան և այլախոհական այլ ասոցիացիաների մասնակիցներ, «Ինքնահրատի» խմբագիրներ: Ժամանակավորապես դադարեցին հրապարակվել «Պոիսկ», «Պամյատ» և մի շարք այլ ամսագրեր ու ալմանախներ: 1982 թ. սեպտեմբերին Հելսինկյան խմբի ազատության մեջ մնացած երեք անդամները հայտարարեցին նրա ինքնավերացման մասին, 1983 թ. ձերբակալվեց «Խրոնիկայի» վերջին համարների հրատարակման կազմակերպիչ Յուրի Շիխանովիչը, 1983–1984 թթ. ընթացքում ՊԱԿ-ի ձեռնարկած միջոցառումների արդյունքում Քաղաքական բանտարկյալների պաշտպանության հիմնադրամը դադարեցնում է իր բացահայտ գործունեությունը: Խորհրդային Հայաստանում վերջին «քաղաքական» դատավարությունը տեղի ունեցավ 1985 թ. հուլիսին (Մանուկյան 2017, 81–83):

Արդեն 1986 թ. ԽՍՀՄ-ում սկսված «վերակառուցումը» աստիճանաբար հնարավորություն ստեղծեց մինչ այդ ընդհատակում գործող այլախոհներին ազատ գործելու և արտահայտվելու: Այն լայնորեն տարածվեց հատկապես 1980–1990-ական թթ., երբ ինչպես կենտրոնում, այնպես էլ միութենական հանրապետություններում սկսեցին ձևավորվել քաղաքական նոր ուժեր, որոնք էլ սկսեցին գլխավորել երկրում սկսված քաղաքական գործընթացները (Աբրահամյան 2019, 79): Հայաստանում ևս սկսվեցին այդ գործընթացները, ուստի այլախոհությունը, որպես երևույթ, դուրս մղվեց պատմության թատերաբեմից: Հայաստանում խորհրդային տարիներին այլախոհության մեջ մեղադրված մարդկանց գործերը վերանայվել են 1990-ական թթ., և նրանք բոլորը ՀՀ գերագույն դատարանի որոշումներով արդարացվել են, գործերը կարճվել են՝ հանցակազմի բացակայության պատճառով (Մանուկյան 2017, 85):

Եզրակացություն

1960–1980-ական թթ. Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններն ընդհանուր առմամբ հետստալինյան ռեժիմի, երկաթե վարագույրի, առկա կարծրատիպերի, սոցիալիստական համակարգի բարեփոխմանն ուղղված քայլեր էին: Այն համազգային շարժում էր, որը պայքարում էր հանուն ազգային պետության և առանձին ժողովուրդների անկախության: Դրա հիմքում ընկած էին երկու կարևոր իրադարձություններ. նախ Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական պայմանագիրն ու դրանից բխող հակահայ հոդվածները, այնուհետև 1956 թ. Խրուշչովյան «ձնհալը» և դրա իրական դրսևորումները:

Խորհրդային Հայաստանում այլախոհները առաջնահերթ խնդիրներ էին սահմանել՝ կորուսյալ հայրենիքի վերամիավորումը, ազգային կերպարի ու լեզվի անաղարտության պահպանումը և անկախ Հայաստանի ստեղծումը: Հայ ազգային շարժումն, իր գոյությամբ, խորհրդային երկրի ետպատերազմյան ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական կյանքի անբաժանելի և ուսանելի դրսևորումն էր: Չնայած բռնաճնշումներին և հալածանքներին, Հայաստանում այլախոհները համառորեն շարունակեցին իրենց ջանքերը՝ նպաստելու ազատությանը, արդարությանը և ազգային ինքնորոշմանը: Շարժումը թեև շուտով մարեց, սակայն հող նախապատրաստեց «վերակառուցման» ժամանակ խորհրդային համակարգի ազատականացման համար, միևնույն ժամանակ օգտագործվեց Արևմուտքի կողմից ԽՍՀՄ-ի վրա ճնշում գործադրելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ). ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2:

Հայաստանի պատմության թանգարան, ՆՆՊՖ 3716:

Մենագրություններ և կոլեկտիվ խմբագրությամբ աշխատություններ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2019 – Աբրահամյան Հ., *Հայաստանի անկախացման հասարակական-քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը*, Երևան, 2019:

ԲԱԴԱԼՅԱՆ, ՄՈՎՍԻՍՅԱՆ, ԿԱՏՎԱԼՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2012 – *Հայոց պատմություն*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2007 – Կարապետյան Մ., Գևորգյան Է., *Խորհրդային Հայաստանը 1920–1991 թթ.*, Երևան, 2007:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ 1972 – *Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828–1923թթ.*, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ – *Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը*, Երևան, 2005:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2014 – Հարությունյան Վ., *Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում*, Երևան 2014:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2023 – Հարությունյան Շ., *Այլախոհական շարժման առաջացման նախադրյալները Խորհրդային Հայաստանում 1950–60-ական թթ.*, Գիտական Արցախ, 2023, № 4 (19), էջ 45, DOI: 10.52063/25792652-2023.4.19-43:

ՄԱՆՈՒԿՅԱՆ 2005 – Մանուկյան Ա, *Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.*, Երևան, 2005:

ՄԱՆՈՒԿՅԱՆ 2017 – Մանուկյան Ա., *Այլախոհության դրսևորման փուլերը Խորհրդային Հայաստանում*, Երևան, 2017:

ՍԱՐԳՍՅԱՆ 2015 – Սարգսյան Ա., *Այլախոհությունը որպես ընդդիմադիր գործունեության դրսևորում Խորհրդային Հայաստանում*, Երևան, 2015:

INTELLECTUAL DISSENT IN THE USSR – *Central Intelligence agency, Confidential, 1973.*

ЕФРЕМОВА 2014 – Ефремова О., *История Отечества*, Питер, 2014.

МАНУКЯН 2006 – Манукян С., *Возникновение националистического дискурса и подпольного движения в Армении в начале 1960-ых годов*, Ереван, 2006.

СМАГИНА 1998 – Смагина С., *Политические партии России в контексте ее истории, Ростов-на-Дону*, Феникс, 1998.

Էլեկտրոնային նյութեր

«ՓԱՐՈՍ». ԱՅԼԱԽՈՀԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ – «Փարոս». այլախոհական առաջին թերթը Խորհրդային Հայաստանում, https://www.aniarc.am/2017/08/27/paros-first-dissident-newspaper-1967/, (18.02.2022):

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ 1980–1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ – Աբրահամյան, Հայաստանի Հանրապետության անկախությունը և հասարակական–քաղաքական կյանքի առաջին քայլերը 1980–1990-ական թվականներին, http://publications.ysu.am/wp-content/uploads/2016/07/20.Henrik_Abrahamyan.pdf, (18.02.2022):

ԴԻՍԻԴԵՆՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՏԵՓԱՆ ՋԱՏԻԿՅԱՆ – Դիսիդենտական Հայաստան, Ստեփան Ջատիկյան, https://mediamax.am/am/news/dissident-armenia/7618/, (18.02.2022):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ – Հարությունյան, «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում», Հարցազրույց, https://www.youtube.com/watch?v=sUIi47_yU10, (18.02.2022):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ-ԱՆԴԱՄ ՍՏԵՓԱՆ ՋԱՏԻԿՅԱՆ – Հարությունյան, Ազգային միացյալ կուսակցության հիմնադիր-անդամ Ստեփան Ջատիկյան, https://hetq.am/hy/article/92586?fbclid=IwAR2qKv-ely7RxTVsFygHpji4qmd5MlcI1bB0XgEkvl8lsC8D4zU9iK1nvag, (18.02.2022):

JAMES VON GELDERN-The Dissident Movement, https://soviethistory.msu.edu/1973-2/the-dissident-movement/ (02.06.2024).

PEETER KAASIK – Dissident Movement in the Soviet Union, 2021, https://communistcrimes.org/en/dissident-movement-soviet-union (02.06.2024).

THOMAS, DANIEL , The Helsinki effect : international norms, human rights, and the demise of communism (Princeton ; Oxford : Princeton University Press, 2001). The Helsinki Effect: International Norms, Human Rights, and the Demise of Communism on JSTOR.

ЗНАЧЕНИЕ СЛОВА ДИССИДЕНТ – Значение слова диссидент, https://kartaslov.ru/%D0%B7%D0%BD%D0%B0%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D1%81%D0%BB%D0%BE%D0%B2%D0%B0/%D0%B4%D0%B8%D1%81%D1%81%D0%B8%D0%B4%D0%B5%D0%BD%D1%82, (01.10.2022).

САМИЗДАТ В СССР: ЦЕНЗУРА, РИСК, ЛИТЕРАТУРА – Самиздат в СССР: цензура, риск, литература, https://eksmo.ru/amp/selections/samizdat-v-sssr-ID15545558/?fbclid=IwAR0k2TAIE5VPxema44pQFA74_scntqpv_pi1JwPhXaiNOJbRcLRu1B3fptM, (01.10.2022).

ЧТО ТАКОЕ ДИССИДЕНТ? ЗНАЧЕНИЕ СЛОВА ДИССИДЕНТ В ИСТОРИЧЕСКОМ СЛОВАРЕ – Что такое Диссидент? Значение слова Диссидент в историческом словаре, https://diclist.ru/slovar/istoricheskiy/d/dissident.html, (01.10.2022).

Irina Badalyan

History Museum of Armenia
irina.badalyan19@gmail.com

DISSIDENT AND HUMAN RIGHTS MOVEMENTS IN SOVIET ARMENIA IN 1960–1980

Keywords: Dissident movement, dissident, Soviet Armenia, repression, verdict, NUP, Helsinki Group

Starting from the 1960s, a wave of dissent spread in Soviet Armenia. Intellectuals, writers, artists and activists became active participants in the movement, facing persecution and imprisonment for voicing their grievances.

Despite brutal reprisals by the KGB and state authorities, dissidents in Soviet Armenia continued their struggle for freedom of speech, human rights, and national autonomy.

This article draws on archival materials, memoirs, and scholarly works to provide a comprehensive analysis of the dissident movement in Soviet Armenia.

Ирина Бадалян

Музей истории Армении
irina.badalyan19@gmail.com

АЛЬТЕРНАТИВНЫЕ И ПРАВОЗАЩИТНЫЕ ДВИЖЕНИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1960–1980 ГГ.

Ключевые слова: Диссидентское движение, диссидент, Советская Армения, репрессии, приговор, НОП, Хельсинкская группа

Начиная с 1960-х годов в Советской Армении прокатилась волна инакомыслия. Интеллектуалы, писатели, художники и активисты стали активными участниками движения, столкнувшись с преследованиями и тюремным заключением за выражение своего недовольства.

Несмотря на жестокие репрессии со стороны КГБ и государственных властей, диссиденты в Советской Армении продолжали борьбу за свободу слова, права человека и национальную автономию.

В данной статье на основе архивных материалов, мемуаров и научных трудов представлен всесторонний анализ диссидентского движения в Советской Армении.

Իրինա Բաղալյան

ԱՅԼԱԽՈՀԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Նկ. 1. Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի բացման արարողությունը, 1967 թ., ՀՊԹ ՆՆՊՖ 3716:

Նկ. 2. Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի բացման արարողության ժամանակ, 1967 թ., ՀՊԹ ՆՆՊՖ 3716: